

մոռնալով, որ զուրկ էի զինքը պաշտպանող պայմաններէն:

Մաթիկ Մելիքխանեանց Ճեմարանէն Մոսկուան ըրած էր առանց այս տագնապին: Անիկա, մեծ այդ քաղաքին մէջ, սորվեր էր օդէն ու ջուրէն, առանց կաթիլ մը նախատինքի ու քրտինքի, նման թիթեռին, որ կը թռչի, կը հասուննայ: Իրեն անծանօթ էր մնացած դժուար, ծանր, դանդաղ, հատկապէս ուսումին, տոտիկ-տոտիկ, աստղի ծայրով աճելուն յուսաբեկիչ տագնապը. գաղափարի, ընթերցումի իր արագութիւնը, իր ընկալչութեան լայնքն ու խորութիւնը, իր միջոցներուն առատութիւնը՝ գիտական իր պատրաստութիւնը զինքը կը պաշտպանէր սա մարզին վրայ, ամէն քարի, ժայռի, հողի երանգի համար գտնելով «աշխարհք մը» ըսելիք, բոլորն ալ նոր ինծի համար, որ իր տարիները վատնած էր գրաբար լուծելու ի բայ Ղուկասի կամ Մատթէոսի աւետարաններուն մեկնութիւնները ընդօրինակելու: Կանխահաս պատանի մըն էի, բայց շուքն իսկ չէի արժեր այդ ուղղութեամբ Մաթիկին: Աւելի յետոյ պիտի սորվէի, որ քննութիւններու եւ դասարաններու առաջինները կեանքին մէջ տասներորդները կու տային յաճախ: Հակառակը ունի նմոյշներ գոնէ քանի մը մեծ մարդերու, որոնք իբրեւ անընդունակ վրտարուած ըլլան դպրոցէն, ապագային կոչուելու համար... Զոլա մը կամ Սփենսըր մը: Չէի կրնար, կրակի կուշտին ծուարած սա ամբողջ գլուխը բոցէն զատել, բռնելու միգամածային պատմութեանէն, տեսնելու համար զայն, այսինքն՝ ինծի չափ թշուառ, ինծի չափ անապահով, իր նաւը յանձնած փոթորիկին, իր կեանքը ածուրդի հանելու իսկ անկարող գոնէ իր ընկերներուն նման, որ վարը, Սասնոյ սարերուն վրայ մեռնելու համար առնուազն կապար մը կ'արժէին թուրքին պիւտձէին, մինչդեռ ինքը -կասկած չունէի այդ մէկ նախագագցմանս ստուգութենէն-հում-հում բզկտուէր պիտի թէկուզ օրը իրիկուն չեղած, եթէ թուրքերը հոտն առնէին իր տեսակին: Դժուար էր Մաթիկին զառածումը դէպի մեր կողմերը